«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – Մարտիրոսյան Արամ

Ղեկավար- Փոխգնդապետ Ա. Իսահակյան

Ուսումնական հաստատություն- Արարատի մարզի Այնթափի Բյուզանդ Մարգարյանի անվան համար 2-րդ միջնակարգ դպրոց

Թեմա - Աշակերտների ուսուցման մեթոդները,մանկավարժական տեխնոլոգիաները և ՆԶՊ առարկայի կարևորությունը

ԵՐԵՎԱՆ-2022

Բովանդակություն

Ներածություն. 3

ԳԼՈՒԽ Ի

Աշակերտների ուսուցման մեթոդներ

1. 1 Որոնք են ուսուցման մեթոդները. 4

1. 2 Արդյունավետ ուսուցման մեթոդները. 7

1. 3 Ուսուցման հնարներ. 10

Մանկավարժական տեխնոլոգիաներ

1. 1 Մանկավարժական տեխնոլոգիաների ձևերը. 13

ՆԶՊ առարկայի կարևորությունը

1. 1 Ինչ քայլեր է ձեռնարկվում. 14

1. 2. ՆԶՊ առարկայի կարևորություն. 17

Շարային պատրաստություն

1. 1 Շարային պատրաստությունը 8-րդ,9-րդ դասարաններում. 18

Եզրակացություն 20

Օգտագործված գրականություն 22

Ներածություն

Կրթությունը սովորելն ավելի դյուրին դարձնելու գործընթացն է, կամ գիտելիքի, հմտությունների,արժեքների, ավանդույթների և սովորությունների ձեռքբերումը: Կրթական մեթոդները ներառում են պատմություն պատմելը, քննարկումը, սովորեցնելը ու մարզելը և ուղիղ հետազոտությունը:Կրթությունը հիմնականում տեղի է ունենում ուսուցիչների ուղղորդմամբ:Ուսուցման մեթոդոլոգիան կոչվում է մանկավարժություն: Կրթության իրավունքն ընդունվել է որոշ կառավարությունների և Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից:Շատ շրջաններում կրթությունը պարտադիր է մինչև որոշակի տարիք: Կրթությունն սկսվել է նախապատմությունից, երբ մեծահասակները կրթում էին փոքրերին այնպիսի գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ էին համարվում իրենց հասարակության մեջ:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ. , ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ. , Դակար):

Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը (ՖԷՀ) արդեն 24 տարի տարաբնույթ ծրագրերի միջոցով փորձում է հայ հասարակությանը ընկալելի դարձնել սոցիալ-դեմոկրատիայի հիմնական գաղափարներն ու արժեքները՝ ազատությունը, արդարությունը և համերաշխությունը: Մենք խորապես հավատացած ենք, որ կենսունակ և ուժեղ ժողովրդավարության համար այս արժեքներով առաջնորդվող հասարակությունը հիմնական շարժիչ ուժն է երկրում: Իսկ ահա արժեքահեն և իրավագիտակից հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է:

ՆԶՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձևավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաև հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն):

Առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչնի. .

Սաադի

Գլուխ 1

Աշակերտների ուսուցման մեթոդները

1. 1 Որոնք են ուսուցման մեթոդները

Ուսուցման մեթոդները փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի,հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում). կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի,հմտեության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը: Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր և գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները և դրանք հետևյալն են.

1. Դասախոսություն
2. Ցուցադրում
3. Համագործակցություն
4. Դասարանական քննարկում
5. Հարցում
6. Գործողությունների հետազոտում դասասենյակում

Դասախոսություն (առաջացել է ֆրանսերեն *lecture* բառից, նշանակում է բանավոր ներկայացում, որ նպատակ ունի սովորեցնել որևէ ինֆորմացիա կամ առարկա, օրինակ՝ համալսարանի կամ քոլեջի դասախոսի միջոցով), ինֆորմացիա, պատմություն, թեորեաներ և հավասարումներ սովորեցնելու, փոխանցելու միջոց:

Քաղաքական գործչի, նախարարի խոսքը կամ անգամ գործարարի՝ վաճառքների մասին ներկայացումը կարող են իրենց ձևով դասախոսություն հանդիսանալ:

Սովորաբար դասախոսը կանգնում է լսարանի դիմաց և թելադրում կամ մեջբերումներ անում նյութի աղբյուրներից:

Ցուցադրում.

Ցուցադրումը դասավանդման ընթացքում օրինակների և փորձարկումների միջոցով իրականացվող գործընթաց է: Օրինակ՝ գիտության ոլորտի ուսուցիչը կարող է ուսանողներին որևէ գաղափար սովորեցնել փորձ կատարելով: Փաստեր ապացուցելիս՝ ցուցադրումը կարող է օգտագործվել վկայակոչված ապացույցների և կապված պատճառաբանվածության համադրությամբ:

Համագործակցություն.

Համագործակցությունը թույլ է տալիս ուսանողներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին: Համագործակցությունը ուսանողների և ուսուցանվող նյութի միջև անձնական կապ է ստեղծում՝ օգնելով ուսանողներին մտածել ավելի անաչառ: Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են: Ուսուցիչները կարող են ներգրավել համագործակցությունը դասընթացի մեջ, որպեսզի գնահատեն ուսանողի թիմում աշխատելու ունակությունները, ղեկավարման հմտությունները կամ ներկայացնելու ունակությունները:

Դասարանական քննարկում.

Դասավանդման համագործակցային մեթոդի ամենատարածված ձևը դասարանական քննարկումներն են: Սա նաև դասը վարելու ժողովրդական եղանակ է, որտեղ յուրաքանչյուր ուսանող ունի համագործակցելու և իր տեսակետը ներկայացնելու հավասար հնարավություն: Դասարանում կատարվող քննարկումը կարող է իրականացվել կամ ուսուցչի կամ ուսանողի կողմից: Քննարկմանը կարող է նաև հաջորդել ներկայացումը կամ ցուցադրությունը: Դասարանական քննարկումները կարող են ընդլայնել ուսանողի հասկացողությունը, ավելացնել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել ուսանողի հեռանկարները, ընդծել հակառակ տեսակետները,ամրապնդել գիտելիքները, ուժեղացնել վստահությունը և աջակցել համայնքին ուսուցման մեջ: Կախված դասընթացի թեմայից և ձևաչափից՝ իմաստալից և գրավիչ քննարկումների հնարավորությունները տարբեր են: Դասարանական քննարկումների արդյունավետությունը ապահովվում են ուսանողների հետ քննարկվող հարցերը, ստացված տեղեկատվությունը այլ ձևով մեկնաբանելը, այնպիսի հարցերի օգտագործումը, որոնք զարգացնում են քննադատական մտածողությունը, օրինակ, «Կարո՞ղ ենք մեկ քայլ առաջ գնալ», «Ի՞նչ լուծումներ կառաջարկեք այս խնդրի համար», «Սա ի՞նչ առնչություն ունի մեր սովորածի հետ», «Որո՞նք են . . . տարբերությունները», «Սա որևէ առնչություն ունի՞ ձեր անձնական փորձի հետ»,

« Ինչ՞ եք կարծում, ինչի՞ պատճառով է. . . »,«Որո՞նք են . . . հետևանքները» :

Ուսումնասիրելով դասավանդման ռազմավարությունների ազդեցությունը սովորելու ռազմավարությունների վրա՝ պարզ է դառնում, որ բարձրագույն կրթության առաջին տարում կրթությունը չի կարող չափից դուրս բացվել և ներկայացնել ուսուցողական նյութը՝ հաշվի առնելով ուսանողների անհատականության և ակադեմիական մոտիվացիայի կարևորությունը, որը մասամբ բացատրում է թե ինչու են ուսանողները սովորում այնպես՝ ինչպես, որ գործում են:

Հարցում.

«Հարցում (անգլ. ՝ debriefing)» տերմինը վերաբերում է խոսակցական ձևին, որը կոնկրետ իրադարձությունից հետո վերածվում է տեղեկատվության փոխանակման և ուսումնասիրության: Իրավիճակից կախված հարցումը կարող է տարբեր նպատակներ ունենալ: Այն հաշվի է առնում փորձը և հեշտացնում է թեմային անդրադարձ կատարելը: Հարցումը երբեմն կարող է ստուգել ուսանողներին սակայն դա մտադրություն չէ: Հարցման նպատակն է ուսանողներին թույլ տալ եզրակացություններ կատարել իրենց փորձի վերաբերյալ ու առաջընթաց կատարել փոփոխության և փոխակերպման միջոցով ինչպես նաև, օգնել նրանց օգտագործել իրենց փորձը: Գործընթացը ներառում է շրջափուլի գիտակցում, որով ուսանողները կարող են առաջնորդվել երբ բանավիճում են:

Գործողության հետազոտում դասասենյակում.

Գործողությունների հետազոտում դասասենյակումը (Classroom Action Research) մի մեթոդ է, որը թույլ է տալիս ուսուցչին հասկանալ թե ինչն է դասասենյակում աշխատում ավելի լավ, որը կօգնի բարելավել ուսանողի սովորելու որակը: Ընդհանուր առմամբ մենք շատ բան գիտենք լավ դասավանդման մասին, բայց յուրաքանչյուր դասավանդման իրավիճակ յուրահատուկ է կախված բովանդակությունից, աստիճանից, ուսանողների գիտելիքներից, սովորելու ձևից և շատ ու շատ այլ գործոններից:

Որպեսզի ուսուցիչը կարողանա առավելագույնի հասցնել ուսանողի ուսումնառությունը նա պետք է կարողանա բացահայտել ինչն է դասարանում ավելի լավ աշխատում: Դասավանդման և հետազոտական յուրաքանչյուր մեթոդ, մոդել և ընտանիք կարևոր է տեխնոլոգիական հետազոտությունների պրակտիկայի տեսանկյունից: Ուսուցիչները ունեն իրենց ուժեղ և թույլ կողմերը և ընդունում են որոշակի մոդելներ լրացնելու ուժեղ կողմերը և հակասելու թույլ կողմերին: Այստեղ ուսուցիչը լավ տեղեկացված է գիտելիքի տեսակից, որ նոր է ներկայացնելու: Այլ դեպքերում, ուսուցիչները իրենց ուսանողներին թույլ են տալիս օգտագործել հետազոտական մեթոդ որպեսզի մարտահրավեր նետեն իրենք իրենց՝ բացահայտելու նոր իմաստներ և գիտելիքներ: Դպրոցներում հետազոտության մեթոդները պարզեցված են, որը թույլ է տալիս ուսանողներին օգտագործել մեթոդները իրենց մակարդակներում:

1. 2 Արդյունավետ ուսուցման մեթոդներ

1. Մտաբերում.

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը: Հետաքրքիր է, որ «կրթություն» բառի լատիներեն «Education» համարժեք բառի արմատը՝ «Educe», թարգմանաբար նշանակում է «դուրս բերել»: Ուսուցման գործընթացում մենք հաճախ ավելի կարևորում ենք գիտելիք տալը: Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:

2. Նյութի սփռում ժամանակի մեջ.

ԱՄՆ-ի Հարավային Դակոտայի համալսարանի պրոֆեսորներ Դուգ Ռոհրերը և Քելլի Թայլորը գիտափորձ են անցկացրել: Ուսանողների մի խմբին տրվել է տասը բարդ խնդիր և առաջարկվել լուծել մեկ շաբաթում: Մյուս խմբին տրվել է խնդիրների նույն ցանկը և առաջարկվել լուծել երկու շաբաթվա ընթացքում: Երկու խմբերից մոտավորապես նույն ժամանակն է պահանջվել խնդիրը լուծելու համար: Պարզապես մի խումբը այդ ժամանակը ծախսել է մեկ շաբաթվա ընթացքում, մյուս խումբը՝ երկու շաբաթվա: 1.1 Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումներ 14 Այնուհետև երկու խմբերը քննություն են հանձնել: Քննության արդյունքում առաջին խմբի ուսանողներն ավելի բարձր արդյունքներ են արձանագրել: Նրանք լուծել են խնդիրների 75%-ը, իսկ երկրորդ խմբի ուսանողները՝ 70%-ը: Չորս շաբաթ անց հետազոտողներն առաջարկել են նորից քննություն հանձնել: Այս անգամ շատ ավելի բարձր արդյունք են արձանագրել երկրորդ խմբի ուսանողները: Առաջին խմբի ուսանողները լուծել են խնդիրների 32%-ը, իսկ երկրորդ խմբի ուսանողները՝ 64%-ը: Այսպիսով՝ մոռացության ցուցանիշը երկրորդ խմբի մոտ չափազանց ցածր է եղել: Հետևաբար՝ շատ ավելի արդյունավետ է քննություններին պատրաստվել ոչ թե վերջին մեկ-երկու օրվա ընթացքում, այլ ավելի տևական ժամանակում: Իսկ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ:

3. Խառը ուսուցում.

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը: Սա հատկապես տեսանելի է մաթեմատիկայի դեպքում:Պատկերացնենք,օրինակը խնդիրների հետևյալ 2 շարքերում.

AAAA BBBB CCCC DDDD

ABCD ABCD ABCD ABCD

Դուգ Ռոհրերը և Քելլի Թայլորը այս թեմայի հետ կապված ևս գիտափորձ են արել: Երբ աշակերտներն ամեն դասին լուծել են մի տեսակի խնդիրներ, դասի վերջում նրանք ցուցաբերել են 100% արդյունք: Խառը խնդիրներ լուծելու դեպքում աշակերտների արդյունքը եղել է 81%: Բայց ընդամենը մեկ օր հետո նույն առաջադրանքները տրվել են աշակերտներին, 100%- ից ցուցանիշն իջել է 38%, իսկ երկրորդ խմբի աշակերտների դեպքում 81%-ից իջել է մինչև 77%: Այսինքն՝ ակնհայտ է, որ խառը ուսուցման դեպքում աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն են: Ի դեպ, Հայաստանում խառը ուսուցման փորձը կիրառում է «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչ Տաթևիկ Սարդարյանը:

10-րդ դասարանի «Հասարակագիտություն» առարկայի դասընթացը բաղկացած է չորս բաժնից՝ «Գեղագիտություն», «Բարոյագիտություն», «Հոգեբանություն», «Տնտեսագիտություն»: Օգտվելով իրեն տրված ակադեմիական ազատությունից՝ Տաթևիկ Սարդարյանը ոչ թե հերթականությամբ անցնում է բաժինները, այլ առաջին դասին ուսուցանում է գեղագիտության թեման, երկրորդ դասին՝ բարոյագիտության, երրորդ դասին՝ հոգեբանության, չորրորդ դասին՝ տնտեսագիտության, հինգերորդ դասին՝ գեղագիտության երկրորդ թեման և այդպես շարունակ: Այս դեպքում աշակերտներն ամբողջ տարվա ընթացքում սովորում են բոլոր չորս բաժինները: Ուսուցման ընթացքում կարևոր է հասկանալ, որ ոչ բոլոր թեմաները կարող են ուսուցանվել խառը մոտեցմամբ:

4. Մանրամասնում.

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Դասավանդողների մոտ սովորաբար առկա է մի երևույթ, որը կոչվում է «գիտելիքի անեծք»: Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ: Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Հետևաբար՝ շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը:

5. Օրիանակով ուսուցում.

Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: Առաջին՝շատ ուսուցիչներ բավարարվում են մեկ օրինակով:Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են

խնդրի լուծման որոշ քայլեր:Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավություն է տալիս:

6. Պատկերի և տեքստի համադրում

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով

ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով:Դրանք կարող են լինել նկարներ,լուսանկարներ,գծագրեր:

7. Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:Ահա այն 3 հարցերը որոնք պետք է տալ սովորողին:

1. Որտե՞ղ եմ ես
2. Որտեղ պիտի լինեմ
3. Ինչպես պիտի հասնեմ այնտեղ,որտեղ պիտի լինեմ :

1. 3 Ուսուցման հնարներ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Պասսիվ մեթոդ

Պասսիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը:Դասախոսության պասսիվ ուսուցման ամենից տարածված ձևն է: Այս մեթոդը լայն տարածում ունի բուհերում, որտեղ սովորում են չափահաս, լիրաժեք ձևավորված անհատներ, որոնք տվյալ առարկան խորությամբ ուսումնասիրելու հստակ նպատակ ունեն:

Ակտիվ մեթոդ

Ակտիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Ինտերակտիվ մեթոդ

Ինտերակտիվ մեթոդը նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ

գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դասավանդողը մշակում է նաև դաս պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ուսանողը սովորում է նյութը):

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը :

Մանկավարժական տեխնոլոգիաներ

1. 1 Մանկավարժական տեխնոլոգիաների ձևերը

Տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի և վարպետության մասին:

Մանկավարժական տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է կամ էլ, որպես նախօրոք պլանավորված, համակարգված և հաջորդական գործընթացի վերարտադրություն և իրականացում:

«Մանկավարժական տեխնոլոգիան» հասկացությունը ուսուցման և դաստիարակության ոլորտում կիրառվող աշխատանքի ձևերի ամբողջությունն է:

Մանկավարժական տեխնոլոգիաներն ունեն դրսևորման երկու ձև. մի դեպքում դրանք բխում են տեսությունից, մյուս դեպքում ՝ սկիզբ են առնում պրակտիկայից: Ուսուցման տեխնոլոգիաների հաջորդականություն է մշակել չեխ մանկավարժ-հումանիստ Յան Ամոս Կոմեսկին:

1. հստակ նախատեսված նպատակներ
2. այդ նպատակներին հասնելու հստակ միջոց
3. որոշակի կայուն կանոններ,թե ինչպես կիրառել այդ միջոցները դրված նպատակին հասնելու համար

Մանկավարժական տեխնոլոգիները բնութագրվում են մի շարք հատկանիշներով.

- ուսուցման և դաստիարակության հստակ, հաջորդական մանկավարժական և դիդակտիկական սկզբունքներով մշակված նպատակների առկայություն
- յուրացման ենթակա նյութի կամ տեղեկատվության կառուցում, խտացում և համակարգում
- դիդակտիկան, տեխնիկան, այդ թվում նաև համակարգչային միջոցների համակարգված կիրառություն ուսուցման և ստուգման գործընթացում
- ուսուցման և դաստիարակության ախտորոշիչ գործառույթի ընդգծում

Անհրաժեշտ է տարբերել մանկավարժական տեխնոլոգիաները ուսուցման մեթոդիկայից:

Մանկավարժության տեխնոլոգիաները կարողանում են ուսուցման և դաստիարակության գործընթացը վերարտադրել, խաղարկել և դրա հետ միասին երաշխավորել ուսումնադաստիարակչական աշխատանքների կամ մանկավարժական խնդիրների լուծման բարձր որակ: Ժամանակակից դիդակտիկայում կան տարաբնույթ տեխնոլոգիաներ, քանի որ յուրաքանչյուր հեղինակ և դասավանդող մանկավարժական գործընթացի մեջ ներմուծում է ինչ-որ նոր և անհատական գիծ:

Մանկավարժական տեխնոլոգիաները դասակարվում են նաև ըստ գերակշռող հատկանիշ ունեցող նպատակների և գերխնդիրների, ըստ ուսուցման կազմակերպման գործադրվող ձևի, ըստ գերակշռող մեթոդների, որոնք առավել շատ են գործածվում:

Յուրաքանչյուր տեխնոլոգիայի կիրառման դեպքում պետք է հետևել.

Դրա գործադրման մակարդակը

Գիտելիքների յուրացման առաջատար հայեցակարգին

Կրթության բովանդակության առանձնահատկությանը

Սովորողների որակի հատկանիշների

Ուսուցման կազմակերպման գերակշռող մեթոդներին

Փիլիսոփայական հիմնավորումը

ՆԶՊ առարկայի կարևորությունը

1. 1 Ինչ քայլեր է ձեռնարկվում

Տարիներ շարունակ զինղեկների չափազանց պատասխանատու գործին նշանակվում էին առավելապես թոշակի տարիքի հասած, նախկին պաշտոնաթող սպաները: Վերջին շրջանում իրավիճակը կտրուկ փոխվել է, ընտրություն կատարելիս հաշվի է առնվում և՛ զինված ուժերում տարիների վաստակը, և՛ ակտիվ կենսագործունեության հնարավորությունը::

Շատ բան է արվել մինչ այժմ: Ամեն տարի շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների ղեկավարներն ընդլայնված համատեղ նիստերի ընթացքում քննարկում են

խնդիրների վերացման, աշխատանքների բարելավման հետ կապված հարցերը: Իսկ յուրաքանչյուր մարզից, համայնքից գործուղված պատվիրակները հետագայում իրենց համայնքի դպրոցներում ներդնում են քննարկումների ընթացքում ստացված դրական փորձը: Բնականաբար, աշխատանքները չեն սահմանափակվում տարեկան մեկ անգամ արդյունքներն ամփոփելով: Պարբերաբար ոլորտի պատասխանատուները հանդիպումներ են ունենում տեղերում, պարզում ուսումնական գործընթացի արդյունավետությունը, տալիս նոր հանձնարարականներ: Մինչդեռ այսօր էլ խնդիրները ոլորտում քիչ չեն: Տարիներ շարունակ զինղեկների չափազանց պատասխանատու գործին նշանակվում էին առավելապես թոշակի տարիքի հասած, նախկին պաշտոնաթող սպաները: Վերջին շրջանում իրավիճակը կտրուկ փոխվել է, ընտրություն կատարելիս հաշվի է առնվում և՛ զինված ուժերում տարիների վաստակը, և՛ ակտիվ կենսագործունեության հնարավորությունը:Եվ այսպես, ՆԶՊ առարկայի դասավանդումը համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստելով զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստելով ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ դաստիարակելուն: Առարկայի կարևորությունը, թերևս, ոչ ոք չի վիճարկում, միայն շատերի մոտ երբեմն հարց է առաջանում՝ ովքե՞ր են երիտասարդ սերնդի շրջանում ձևավորում հայրենիքին անձնվիրաբար ծառայելու, զինվորական պարտքն անմնացորդ նվիրումով կատարելու գիտակցումը: Չէ՞ որ ՀՀ ԶՈՒ խնդիրների, առանձնահատկությունների և նշանակության, հայոց բանակի պատմական ավանդույթների, այսօրվա զենքի ու ռազմական տեխնիկայի, կանոնադրությունների և արարողակարգերի մասին վաղվա զինվորներն իմանում են հենց աշակերտական նստարանից, և հենց առաջին տպավորությունն էլ վճռորոշ է լինում: Տարիներ շարունակ զինղեկների չափազանց պատասխանատու գործին նշանակվում էին առավելապես թոշակի տարիքի հասած, նախկին պաշտոնաթող սպաները: Վերջին շրջանում իրավիճակը կտրուկ փոխվել է, ընտրություն կատարելիս հաշվի է առնվում և՛ զինված ուժերում տարիների վաստակը, և՛ ակտիվ կենսագործունեության հնարավորությունը:

Մեծամասամբ նշանակվում են զորքերից տեղափոխված սպաներ: Սակայն շատ դեպքերում նույնիսկ այդ կարգն է որոշակի դժգոհություններ առաջացնում, քանի որ, զուտ զինվորական գիտելիքներ ունենալուց բացի, մի շարք թեկնածուներ չեն ունենում համապատասխան մանկավարժական ունակություններ և չեն ապահովում դասավանդման պատշաճ մակարդակ: Այս դեպքում ոլորտի շատ մասնագետներ արդարացիորեն նշում են զինկոմիսարիատների դերի մեծացման անհրաժեշտության մասին: Զինկոմիսարիատում տվյալների ընդհանուր բազա կարելի է ստեղծել, որում կպահվեն տվյալ համայնքում հաշվառված համապատասխան որակավորում ունեցող անձանց անհատական տվյալները, և անհրաժեշտության դեպքում նրանց շարքերից էլ կընտրվի զինղեկի թափուր տեղին հավակնող թեկնածու: Ընդհանրապես, զինկոմիսարիատները ակտիվ աշխատում են

զինղեկների հետ: Երևան քաղաքի Էրեբունի համայնքի զինկոմիսարիատի օրինակով ներկայացնենք բոլոր զինկոմիսարիատների աշխատանքը տվյալ բնագավառում:

Նախևառաջ նշենք, որ աշխատակիցները պարբերաբար հանդիպում են համայնքի բոլոր դպրոցների զինղեկների հետ, ինչը հետագայում հաստատեցին նաև իրենք՝ զինղեկները: Ամեն տարի օգոստոս ամսին զինկոմ, գնդապետ Ս. Սահակյանի անմիջական հսկողության ներքո կազմակերպվում են եռօրյա պարապմունքներ բոլոր զինղեկների մասնակցությամբ, շարային ստուգատես: Նաև ամեն ամիս տեղի են ունենում աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ զորամասերի հետ համագործակցողների փոխադարձ աշխատանքային պլանների շուրջ: Տարվա ընթացքում միջոցառումները պլանավորվում են համայնքի ավագ զինղեկ, փոխգնդապետ Խաչատրյանի հետ համատեղ: Փոխգնդապետը մյուս զինղեկների հետ հանդիպումների մի մասը անցկացնում է հենց զինկոմիսարիատում, ընթացիկ աշխատանքների համար էլ նրան տարածք է հատկացվում զինկոմիսարիատի շենքում: Իհարկե, հենց իրենք՝ զինկոմիսարիատի աշխատակիցներն էլ վիճակը իդեալականացնելուց հեռու են: Նրանք մատնանշում են մի շարք խնդիրներ, որոնք խանգարում են ոլորտի լիարժեք զարգացմանը:

Մասնավորապես՝ զինկոմը և երկրորդ բաժնի պետը դժգոհեցին զինղեկների ընտրության կարգից, քանի որ գործող կարգի համաձայն՝ իրենց աշխատակիցներից մեկը ներգրավված է հանձնաժողովի կազմում, այնինչ դա ավելի շատ կրում է ձևական բնույթ, և տվյալ սպան չի կարող ազդել դպրոցի տնօրենի՝ այս կամ այն անձին զինղեկ նշանակելու որոշման վրա: Արդյունքում՝ որոշ դպրոցներում զինղեկները չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին և իրենց պարտականությունները կատարելիս թերանում են: Նույնիսկ այս դեպքում զինկոմիսարիատը որևէ լիազորություն չունի զինղեկին աշխատանքից հեռացնելու հարցում: Ընդհակառակը, առաջին բողոքները հենց զինկոմիսարիատին են ուղղվում: Դժգոհություն է առաջացնում նաև զինղեկների պաշտոնում կանանց առաջադրելը, այն պատճառաբանությամբ, որ գրեթե ամբողջովին կանանցից կազմված մանկավարժական կոլեկտիվում կին զինղեկը չի կարող ազդեցիկ ներգործություն ունենալ: Հարկ է նշել, որ շատ դպրոցներում հենց այդ՝ ազդեցիկություն խաղալու պատճառով էլ որոշակի թերացումներ են առաջանում դասավանդման բուն գործընթացում: Մի շարք տնօրեններ զինղեկներին պահում են որպես, այսպես կոչված, ուժեղ ձեռք աշակերտներին վախեցնելու նպատակով, ինչն ինքնին անընդունելի է :

1. 2. ՆԶՊ առարկայի կարևորությունը

Աշակերտների հայրենասիրական դաստիարակությունը հանրակրթական դպրոցի կարևորագույն խնդիրներից է: Դպրոցում սովորելու ընթացքում աշակերտների առաջնային

պարտականությունն է ֆիզիկապես հանդարտվել, իրենց մեջ կրթել ազատ մարդու բարոյական և կամային հատկությունները: Հայրենիքի պաշտպանից նա պահանջում է բնագիտական և ճշգրիտ գիտությունների՝ ֆիզիկա, մաթեմատիկա, իհարկե, ՆԶՊ գիտելիքներ:

ՆԶՊ առարկան նպաստում է երեխաների պատկերացումների ձևավորմանը դեպի պետություն,տալիս է հայրենասիրության արժեքավոր դասեր,ցույց է տալիս այն պայքարը,որը պետք է իրականցնի այդ սերունդը,սովորեցնում է լինել հայրենասեր,նվիրված հայրենիքին և անձնազոհ:Առարկան ցույց է տալիս,որ հայրենիքը պետք է սիրել ամեն ինչից շատ:

Մեր պտությունը կշահի ,եթե ավելի հաճախ կազմակերպենք նզպ-ին առնչվող թեմատիկ երեկոներ, դասախոսություններ, դասաժամեր, պատի թերթերի լույս ընծայում, պատերազմի վետերանների հետ հանդիպումներ, էքսկուրսիաներ պատմության թանգարաններ:

Հայրենիքի համար ապրում և մեռնում է ոգու մարդը,միայն նմանը. . . .

Գարեգին Նժդեհ

Շարային պատրաստություն

1.1. Դասի պլանի մոդել 1

Դասապլան կազմելիս ուսուցիչները կարող են առաջնորդվել ստորև ներկայացված դասի պլանի մոդելով, որն ամբողջությամբ հնարավորություն է տալիս կառուցել արդյունավետ դասապրոցես:

VIII ԴԱՍԱՐԱՆ	
ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արամ Մարտիրոսյան	
ՆԶՊ	
ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ	
ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՆՅՈՒԹԻ ՆՊԱՏԱԿԸ	
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ (ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ)	**ԱՐԺԵՔԱՅԻՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ)**
Իմանալ՝ ո՞րն է . **շարային պատրաստության դերն ու նշանակությունը, շարքը, տողանը, շարքի ճակատը, թիկունքը, աջ ու ձախ թևերը, միջակա տարածությունն ու հեռավորությունը, շարքի խորությունն ու լայնությունը** 1. **շարք** 2. **տողան**	**Համագործակցային մեթոդի կիրառմամբ մեկը բոլորի, բոլորը մեկի, միմյանց օգնությամբ սկզբունքների, թույլ և ուժեղ բնավորությունների առողջ բախման, համառության և սկզբունքայնության, հայրենասիրության հատկանիշների ձևավորում՝ ի բարօրություն աշակերտի:**

3. թիկունք 4. թև 5. խորություն 6. լայնություն 7. հեռավորություն	Միջավայր ստեղծել՝ բոլորս ենք, մենք ենք, մենք դա կարող ենք անել և կանենք սկզբունքների ձևավորման համար:

ԱՐԴՅՈՒՆՔԸ		
ՊԵՏՔ Է, ՈՐ ԲՈԼՈՐԸ ԻՄԱՆԱՆ	ՑԱՆԿԱԼԻ Է, ՈՐ ՇԱՏԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՆ	ՑԱՆԿԱԼԻ Է, ՈՐ ՈՄԱՆՔ ԿԱՐՈՂԱՆԱՆ
Շարային պատրաստության դերն ու նշանակությունը, գաղափար կազմեն շարք, տողան, շարքի ճակատ, թիկունք, աջ թև, ձախ թև, տարածություն, հեռավորություն, շարքի խորություն, լայնություն հասկացությունների մասին:	Իմանան երթային շարքի նշանակությունը, շարային շարքի և ֆիզիկա առարկայի ռեզոնանս հասկացության փոխկապակցվածությունը (խառը քայլ), կարողանան գործնականում կիրառել:	Երկշարք և մեկշարք երթային շարժի առավելությունը և նշանակությունը, կատարեն ինքնուրույն հրահանգներ և դրանք կատարեն:

ԳՆԱՀԱՏՈՒՄ		
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ԴԱՍԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ՝ 10 ՄԻԱՎՈՐ		
ՄԵԹՈԴԸ		
ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ		
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ		
ԴԱՍԱԳԻՐՔ ՏԵՏՐ ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌ		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ուսուցիչ	Աշակերտ	Ժամանակ
Նախորդ դասերի կրկնության կազմակերպում, շարք և տողան, խորություն, լայնություն և հեռավորություն, ճակատ և թիկունք հասկացությունների իմացության հստակեցում:	Կարողանա կատարել ուսուցչի, ջոկի ավագի հրահանգները, ճիշտ պատասխանի տրված հրահանգների փոխկապակցվածությունը	Մեկ դասաժամի համար է՝ 38 րոպե
ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ 5 րոպե		
ԱՄՓՈՓԵԼ ԴԱՍԸ՝ 2 րոպե		

ԱՐԴՅՈՒՆՔԸ		
ՊԵՏՔ Է, ՈՐ ԲՈԼՈՐԸ ԻՄԱՆԱՆ	ՑԱՆԿԱԼԻ Է, ՈՐ ՇԱՏԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՆ	ՑԱՆԿԱԼԻ Է, ՈՐ ՈՄԱՆՔ ԿԱՐՈՂԱՆԱՆ

Յուրաքանչյուր աշակերտ իմանա իր տեղը շարքում, ճիշտ ընկալի հրամանները (նախազգուշական և կատարողական), ճիշտ կատարի դարձումները(ձախ դարձ, աջ դարձ, հետ դարձ) կանգնած դիրքում:	Իմանան երթային շարքի նշանակությունը, խառը քայլը տարբերի շարային քայլից, քայլքի ժամանակ ճիշտ կատարի դարձումների վերաբերյալ հահանգները:	Երկշարք և մեկշարք երթային շարժերը կատարեն ինքնուրույն և կարողանան հարհանգները իրենք տան՝ տեղին և ժամանակին:
ԳՆԱՀԱՏՈՒՄ		
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ԴԱՍԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ՝ 10 ՄԻԱՎՈՐ		
ՄԵԹՈԴԸ		
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ		
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ		
ԴԱՍԱԳԻՐՔ ՏԵՏՐ ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌ		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ուսուցիչ	Աշակերտ	Ժամանակ
Նախորդ դասերի կրկնության կազմակերպում, շարք և տողան, խորություն, լայնություն և հեռավորություն, ճակատ և թիկունք հասկացությունների իմացության հստակեցում, աջ դարձ, ձախ դարձ և հետ դարձ հահանգների կատարողականի մշակում:	Կարողանա կատարել ուսուցչի, ջոկի ավագի հրահանգները, ճիշտ պատասխանի տրված հրահանգների փոխկապակցվածությունը	Մեկ դասաժամի համար է՝ 38 րոպե
ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ 5 րոպե		
ԱՄՓՈՓԵԼ ԴԱՍԸ՝ 2 րոպե		
IX ԴԱՍԱՐԱՆ		
ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արամ Մարտիրոսյան		
ՆՊՊ		
ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ		
ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՆՅՈՒԹԻ ՆՊԱՏԱԿԸ		

Տեսականը	ԱՐԺԵՔԱՅԻՆ(ՍՈՑԻԱԼԱԿԱՆ)
Իմանալ և ցուցադրել դարձումները շարժման ժամանակ, շարքից դուրս գալը և շարք վերադառնալը, զինվորական ողջույնի կատարում տեղում և շարժման ընթացքում, զինվորական ողջույնի կատարում գլխարկով և առանց գլխարկի	Պարտքի ու պատասխանատվության զգացումի վեհ գաղափարների, հանուն ընկերոջ դժվարությունների հաղթահարման, հանուն սկզբունքների բնավորության ձևավորում: Սեփական կարծիքի նկատմամբ քննադատական վերաբերմունքի մշակում, հարմարվողականություն:
ԱՐԴՅՈՒՆՔԸ	

ՊԵՏՔ Է, ՈՐ ԲՈԼՈՐԸ ԻՄԱՆԱՆ	ՑԱՆԿԱԼԻ Է, ՈՐ ՇԱՏԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՆ	ՑԱՆԿԱԼԻ Է, ՈՐ ՈՄԱՆՔ ԿԱՐՈՂԱՆԱՆ

Շարային վարժությունների դերն ու նշանակությունը, գաղափար կազմեն շարքից դուրս գալու, շարք վերադառնալու, ողջունելու՝ գլխարկով և առանք գլխարկի գործողությունների ճշտորեն կատարումը:	**Իմանան շարային վարժությունների նշանակությունը, գլխարկով և առանց գլխարկ ողջունելու կարողությունը, հասկանան նշված գործողությունների կատարման հերաթականությունը և նշանակությունը:**	**Հրահանգավորումների ինքնուրույն ի կատար ածում, կողմնորոշում յուրաքանչյուր իրավիճակում:**

Եզրակացություն

Հաշվի առնելով վեր նշված սկզբունքները հասկանում ենք, որ երեխաների ռազմահայրենասիրության, մարտական ոգու պարձրացման համար առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի առարկայի դասավանդումը :

ՆԶՊ առարկայի դասավանդումը պետք է իրականացվի երիտասարդների մոտ Հայրենիքի նկատմամբ սեր ներշնչելով: Դասաժամերին կամ այլ միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է խոսել նրանց մասին, ովքեր անմիջականորեն ներգրավված են եղել, և լինում են Հայրենիքի ազատագրման գործին, ովքեր, իրենց կյանքի գնով, հավատարիմ մնացին մեր Հայրենիքի սահմանների պաշտպանությանը: Անհրաժեշտ է հիշել, որ հերոսները ապրում են մեր կողքին, մեզ հետ, մեր մեջ, որոնց հետ անմիջական հանդիպումները, հիշարժան օրերը նրանց հետ անցկացնելը, նահատակների շիրիմներին հարգանքի տուրք մատուցելը էլ ավելի կխորացնի սովորողի էմոցիոնալ դաշտի կարգավորմանն ու գիտակցական գործունեության մղմանը, ո՛չ պատերազմին, հակառակ դեպքում՝ հայրենիքի պաշտպանի ձևավորմանը:

Այդ առումով ՆԶՊ-ի ուսուցիչները մեծ ծառայություն են մատուցում ապագա մարտիկին:

Հիշելով Արցախյան առաջին, երկրորդ՝ Քառօրյա և երրորդ՝ 44-օրյա պատերազմները պետք է աշակերտների մեջ ռազմահայրենասիրույան և մարտական ոգու բարձրացման համր:

Հաղթում է այն կողմը, որը վստահ է ոչ թե սպառազեն բռունցքի, այլ ներազեն գերազանցության:

Գարեգին Նժդեհ. . . . . .

Օգտագործված գրականություն

- Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
- Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.
- Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
- Выготский Л.С. Педагогическая психология.
- Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014.
- Agarwal, Pooja K. Powerful Teaching. Wiley. Kindle Edition.
- Sherrington, Tom. Rosenshine's Principles in Action, John Catt Education, 2019
- Taylor, K& Rohrer, D., "The Effects of Interleaved Practice", Applied Cognitive Psychology 24: 837–848 (2010). http://uweb.cas.usf.edu/~drohrer/pdfs/Taylor&Rohrer2010ACP.pdf
- Willingham, Daniel T. Why Don't Students Like School?: A Cognitive Scientist Answers Questions About How the Mind Works and What It Means for the Classroom. Wiley. Kindle Edition